ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՅՎԱԶՅԱՆ Հ. Հ.

Միքայել Նալբանդյանի համար ամենակարևոր խնդիրներից էր մարդու լիակատար ազատության, նրա մտքի և համոզմունքների անկաշկանդ դրսևորման հարցը, որն անմիջականորեն կապվում էր մարդկային արժանապատվության հետ: Այդ գաղափարը նրա և՛ պոեզիայի, և՛ արձակ գործերի ու քննադատական-հրապարակախոսական աշխատությունների ողնաշարն ու հիմնական թեման էր: «Մարդը ստեղծված է ազատ լինելու համար...»[1],- ասում էր Մ. Նալբանդյանը և համոզիչ փաստերով ցույց տալիս, որ այդ բնական իրավունքը կոպտորեն խախտում են բռնապետական իշխանությունները: Առանց վարանելու և ընկրկելու բանտի ու աքսորի առաջ, նա ամբողջովին նվիրվում է հարստահարված ժողովրդի «առաթուր կոխված» իրավունքի պաշտպանությանը: «Բայց այն խեղճ հայը,- գրում է Մ. Նալբանդյանը,- այն հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայը, ոչ միայն ճնշված օտարներից ու բարբարոսներից, այլև յուր հարուստներից, յուր հոգևորներից և կիսագրագետ, ուսումնական կամ փիլիսոփա ասվածներից, ահա այն հայը ամենայն արդարացի իրավունքով գրավում է մեր ուշադրությունը և նորան դարձյալ, առանց և վայրկենական երկմտության, նվիրեցինք մեր բոլոր կարողությունը»[2]: 1858 թ. սեպտեմբերի 1-ին Կ. Հայրապետյանին գրած նամակում նա առավել շեշտում է ճշմարտության և արդարության համար պայքարելու իր հաստատակամությունը. «Ազգի և ճշմարտության համար իմ կյանքը իմ աչքումը ոչինչ է, և ամեն րոպե պատրաստ եմ զոհել, և այն օրից, երբ գրիչ վեր եմ առել ձեռքս, մինչև գերեզման ես պիտի պատերազմեմ ստության և խավարի հետ և, որքան թույլ տան մեզ շրջապատած հանգամանքը, պիտի խորտակեմ դավաճան վիշապի գլուխը»[3]: Մ. Նալբանդյանը դրանով ընդհանուր եզրեր էր տեսնում երջանկության ու պարտքի միջև, շեշտում, որ պարտքի հետևողական կատարումը, հանուն ուրիշների երջանկության անձնական շահերից հրաժարումը վայելքի և ուրախության աղբյուր են, այլասիրության անգնահատելի արտահայտություն:

Նա դատապարտում էր միսիոներների գործունեությունը, որոնք բռնադատում էին ուրիշների խղճի ազատությունը և «քամում ազատ դատողության վերջին բարոյական զորությունը»[4]: Ասվածից կարելի է եզրակացնել, որ Մ. Նալբանդյանն առաջ է քաշում խղճի ազատության սկզբունքը՝ չժխտելով, իհարկե, հավատի կարևորությունը մարդու հոգևոր-բարոյական աշխարհի ձևավորման գործում: Եթե բնապաշտ Աբովյանը նոր կրոնը համարում էր հզոր միջոց մարդու «խավար մտքի

---

[1] **Նալբանդյան Մ.,** Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 2, Ե., 1980, էջ 262:

[2] Նույն տեղում, հ. 4, Ե., 1983, էջ 18:

[3] Նույն տեղում, հ. 5, Ե., 1984, էջ 72-73:

[4] Նույն տեղում, հ. 4, էջ 285:

փարդեն» պատռելու և երկրի երեսից մարդկային թշնամանքն ու ատելությունը վանելու, սեր ու բարեկամություն հաստատելու համար, ապա Մ. Նալբանդյանը որոշակի հայտարարում էր, թե «անզարդ, անապատ, չոր ու դատարկ» երկրի երեսից թշնամությունն ու ատելությունը վերացնելու և սեր ու բարեկամություն հաստատելու համար բնավ կարիք չկա երկնքի միջամտության, այլ հասարակական կյանքի օրինավոր կառուցվածքի միջոցով պետք է լուծել այդ կարևոր խնդիրը:

Ազատ լինելով կրոնի հուզական ընկալումից՝ Մ. Նալբանդյանը, միաժամանակ, գնահատում էր կրոնի կազմակերպական զորությունը՝ նրա կարևոր արժանիքներից մեկը համարելով սերը և փոխադարձ ներողամտությունը: Այդ գաղափարի հիմնադիրը՝ Քրիստոսը, նահատակվեց, ասում է նա, որպեսզի մարդիկ ապրեն, ուրեմն իր պայքարը ոչ թե այս կամ այն հավատի դեմ է, այլ ամեն տեսակ բռնության, քանի որ վերջինս միշտ քողարկվում է ազատության անվան տակ, իսկ դարանակալ խավարը զարդարվում է խղճի ազատության լուսեղեն դիմակով և պայքարում բուն ազատության դեմ[5]:

Ընդհանուր առմամբ, XIX դ. հայ փիլիսոփայական միտքը լուսավորական բնույթ ուներ, փորձում էր հաշտեցնել գիտությունն ու կրոնը՝ պահպանելով հավատի գերազանցությունը բանականության նկատմամբ: Սակայն լուսավորական ուղղության ներկայացուցիչները (Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ստ. Պալասանյան և ուրիշներ), գերազանցապես հենվելով լուսավորական փիլիսոփայության գաղափարների և գիտական մտքի նվաճումների վրա, քննադատում էին իրենց դարն ապրած կրոնաաստվածաբանական պատկերացումները, գիտությունը հակադրում էին կրոնին, գիտության և լուսավորության տարածման մեջ էին տեսնում պատմական առաջընթացի, ազգային խնդիրների լուծման միակ ճանապարհը: Այդ նպատակով, հայ մտածողներն ավելի մեծ ուշադրություն էին դարձնում մարդաբանական, հասարակական-քաղաքական և բարոյագիտական հարցերին:

Մ. Նալբանդյանը կարևորում էր խղճի ազատության սկզբունքը, իսկ հավատը համարում մասնավոր գործ: «Ինչ որ վերաբերում է բուն ներքին կրոնին,- գրում է նա,- թող յուրաքանչյուր մարդ յուր խղճմտանքից հարցանե և պատասխան տա Աստուծո. մենք ոչ ինկվիզիտոր ենք, ոչ միսիոնար: Բայց երբ բռնությունը՝ ազատությամբ շպարվելով հանդես կգա, երբ նեղսիրտ խավարը խղճի ազատության և լուսեղեն դիմակներով կզարդարվի և բուն ազատությունը կքարկոծվի, այն ժամանակ ամեն ստույգ ազատասիրի պարտքն է բանականության սրով ասպարեզ մտանել և կեղծավոր փարիսեցիների գլխից Մովսեսի քողը մերկացնել...»[6]:

Մ. Նալբանդյանն առաջ էր քաշում մարդու բարոյական կատարելագործման խնդիրը: «Այո՛, մարդն է մեր կատարելությունը՝ *ideal*»,- գրում է նա և անբարոյականություն համարում որևէ հանցանքի մտահղացումը՝ անկախ դրա իրա-

---

[5] Նույն տեղում, էջ 286:

[6] Նույն տեղում, էջ 286-287:

գործումից: Մ. Նալբանդյանն անբարոյական է համարում նաև քրիստոնեական բարեգործությունը, եթե այն արվում է հանդերձյալ աշխարհում «վարձք ու մրցանակի» արժանանալու ակնկալությամբ կամ աշխարհիկ կյանքում հռչակ ձեռք բերելու համար. «Հազար կյանք փրկե դու այդ ճանապարհով, թող պաշտոնական բարոյականք կնդրուկ ծխեն քեզ, մեր աչքում դու ամբարիշտ ես»[7]:

Մ. Նալբանդյանը հաճախ էր կրկնում, որ իր դավանած բարոյականության սկզբունքներն առնչություն չունեն աստվածային պատգամների հետ, այլ կապված են երկրային կյանքի, մարդկանց սոցիալական վիճակի և էության հետ, քանի որ իր նպատակն է անշահախնդիր ծառայել չարքաշ մարդկությանը, իսկ երջանկությունը չի կարելի պատկերացնել առանց ընդհանուրի բարօրության: Նա դատապարտում էր ոչ միայն օտարների լուծը, այլև «ազգի ցավերին դարման անելու խորհրդով ընտրված պարոններին, որոնք «յուրյանց մատով հանում են ազգի աչքը» և «բռնություններ են հնարում ընդդեմ ազգին»[8]: Ահա ազգային նման պարոնների գործունեությունը մերկացնելու համար Մ. Նալբանդյանը ոչ միայն դիմում է հրապարակախոսության, այլև գրական տարբեր ժանրերի՝ հարուստ խավերի սոցիալական կերպարը բացահայտելու համար: Նա մեր գրականության մեջ առաջինն էր, որ պատկերեց նորաթուխ ունևորների կերպարները, ծանակեց նրանց տգիտությունը, ընչաքաղցությունն ու հոգեկան դատարկությունը, հատկանիշներ, որ հետագայում խորացան Ռաֆֆու, Շիրվանզադեի, Պարոնյանի և մյուսների ստեղծագործություններում: «Մեռելահարցուկ» վեպում գրողը հանդես է բերում Հովնաթանյանցին, որը մեր գրականության մեջ նորություն էր և դարձավ Զիմզիմովի, Պետրոս Մասիսյանցի, Զամբախովի, Մարկոս աղայի և առևտրավաշխառուական բուրժուազիայի այլ ներկայացուցիչների նախատիպը: Պատահական չէ, որ տասնամյակներ անց Ռաֆֆին նմանատիպ կերպարներ կերտելիս աչքի առաջ ունեցել է Մ. Նալբանդյանի ստեղծագործությունն ու տիպականացման արվեստը՝ իր առաջին վեպը՝ «Սալբին», նվիրելով նրա անմահ հիշատակին:

Մ. Նալբանդյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Հովնաթանյանցը զուրկ է բարոյական ազնիվ գծերից և ամեն ինչ չափում է դրամով: Ըստ նրա՝ ամբողջ աշխարհը շարժող և կառավարող ուժը, զորություն տվողը արծաթն է: Նա զարմանում է, թե ինչպես է արևը ամեն օր լուսավորում երկիրը առանց վարձի, կամ թե ինչպես է Աստված ստեղծել աշխարհը առանց օգուտի ակնկալության: Հովնաթանյանցն անխիղճ վաշխառու է ոչ միայն այլոց, այլև հարազատների համար: Արծաթի ժանգը նստել էր նրա ուղեղի վրա և թույլ չէր տալիս շիտակ նայել մարդկանց բախտին ու ճակատագրին: Նա դարձել էր աղջկա դժբախտության պատճառը, որդիներին դաստիարակել էր շահասիրության ոգով, որի հետևանքով բարոյալքվել էր ընտանիքը: «Նպատակն արդարացնում է միջոցը»,- ասում էր նա և շարունակում իր շահադիտական գործունեությունը:

Մարդու երջանկության, ազատ սիրո բնական իրավունքի պաշտպանության և չարի նկատմամբ բարու հաղթանակի հարցերն են շոշափված «Մինին՝ խոսք,

[7] Նույն տեղում, էջ 99:
[8] Նույն տեղում, էջ 300-301:

մյուսին՝ հարսն» վիպակում, որը գրողի առաջին գեղարվեստական գործն է: Մանր առևտրական Թյությունճի օղլուն իր գեղեցիկ աղջկան՝ Մանուշակին, նշանում է քաղաքի վաճառականներից մեկի՝ Մկրտչի հետ, սակայն հանգամանքների բերումով աղջկան ամուսնացնում է մեկ ուրիշի՝ Շահումյանց Գևորգի հետ, այսինքն՝ մեկին խոսք է տալիս, մյուսին՝ հարս: Այս պարզ սյուժեի միջոցով Մ. Նալբանդյանն արծարծում է ժամանակաշրջանին բնորոշ մի շարք կարևոր խնդիրներ: Նա նշում է, որ վիպակի «խորհուրդն է, ինչպես եվրոպական այդպիսի աշխատությունների խորհուրդը, բարոյական լուսավորություն և կրթություն...»[9]: Ըստ երևույթին, Նալբանդյանը նկատի ուներ եվրոպական լուսավորական ռեալիզմի ստեղծագործությունները, որոնք ուղղված էին ֆեոդալական հարաբերությունների դեմ, ձգտում էին «բանականության ու արդարության» սկզբունքների հաստատման և պաշտպանում դաստիարակության միջոցով կազմավորվող «բնական մարդու» իդեալը: Ինչպես իր շատ գործերում, այս վիպակում ևս Մ. Նալբանդյանը գեղեցկության «մոտավոր սահմանը» տեսնում է բնությանը մոտ լինելու մեջ, քանզի մարդկային իմացությունը «բնության արտացոլումն է», մարդու գաղափարների ազնվությունը կամ ճշմարտությունը կախված են բնության ճանաչողության չափից: Այստեղ տեսնում ենք Վ. Բելինսկու փիլիսոփայական մտքերի արձագանքը: «Բնությունը,- գրում էր նա,- արվեստի հավիտենական նախօրինակն է, իսկ մեծագույն և ազնվագույն առարկան բնության մեջ՝ մարդն է»[10]:

Մ. Նալբանդյանը ծանոթ էր մարդու մասին Լ. Ֆոյերբախի փիլիսոփայական ուսմունքին և այս վիպակում Գևորգ Շահումյանցի միջոցով ներկայացնում է «մարդու մեջ ճշմարիտ մարդկայինի» կարևոր գծերը՝ գրելով. «Մարդը հոգի ունի... բանականություն ունի և գլխավոր սոցա մեջ, սոցա դատավոր և առաջնորդ, խիղճ ունի»[11]: Խղճի զգացողությունը Շահումյանցը կապում է բանականության և կամքի ազատության հետ, որոնք թեև «Աստուծուց ստացած» են, բայց պայմանավորված են մարդու բնությամբ, իսկ մարդը կարող է և պետք է զարգացնի իր կամքը, լուսավորի բանականությունը, կատարելագործվի և ընդունակ դառնա ճանաչելու չարն ու բարին: Շահումյանցը պնդում է, որ ամեն ինչ կախված է կամքի ազատությունից, իսկ եթե բացակայում է այն, ուրեմն մարդը նմանվում է գազանի և ամեն արարք կատարում է բնազդորեն:

Խիստ կարևորելով խղճի և բանականության փոխհարաբերության խնդիրը և չթերագնահատելով բանականության դերը՝ Մ. Նալբանդյանը, այնուամենայնիվ, առաջնությունը տալիս է խղճմտանքին ու գթասրտությանը: Մարդը կլինի արժանավոր, եթե «հնազանդ մնա և ականջները սուր պահե խղճմտանքի ձայնի առաջև, և ոչինչ այնպես բան չգործե, որ խղճմտանքը խածատեր և վիրավորեր նրա հոգին»[12],- ասում է Շահումյանցը և մարդու գլխավոր արժանավորությունը համարում սիրո զգացումը, այն նույնացնում Աստծու հետ (հիշենք աստվածաշնչյան

---

[9] Նույն տեղում, հ. 5, էջ 67:

[10] **Белинский В. Г**., *Собр. соч., т. 3, М., 1948, с. 787.*

[11] ԵԼԺ, հ. 1, Ե., 1979, էջ 191:

[12] Նույն տեղում:

խոսքը՝ Աստված սեր է): Մ. Նալբանդյանն առաջ է քաշում համամարդկային սիրո գաղափարը, այն համարում աստվածային հոգի, որ կարող է քարը հալեցնել, սրերը բթացնել, կրակները հանգցնել: Այս առթիվ հիշենք գերմանացի մեծ փիլիսոփային: Լ. Ֆոյերբախն իր «Քրիստոնեության էությունը» աշխատության մեջ հիմնավորում է համամարդկային սիրո՝ հումանիզմի գաղափարը. «Մարդը մարդու համար Աստված է՝ այդպիսին է բարձրագույն գործնական հիմնասկիզբը, այդպիսին է և համաշխարհային պատմության շրջադարձային կետը»[13]:

Մ. Նալբանդյանը մարդու բարոյական կատարելագործման խնդիրն անմիջականորեն կապում է ճշմարտության և սիրո հետ, իսկ ճշմարտությունը, ըստ նրա, լույս է, որն իր հզոր ճառագայթներով լուսավորում է մարդու մթագնած հոգին. «Թո՛ղ միայն նորան (արեգակին - Ա. Հ.) ծածկող ու վարագուրող ամպերը ցրվին, փարատվին, և ահա ճշմարտության արևը կփայլի յուր բոլոր պայծառ ճառագայթներով»[14]:

Կարևորելով բանականության ու կամքի հետ կապված խղճի ազատության սկզբունքը՝ Մ. Նալբանդյանն առաջ է քաշում մարդու բարոյական կատարելագործման խնդիրը, այն բխեցնում մարդկանց սոցիալական վիճակի բարելավման, ազատ կյանքի ապահովման, օտարների լուծը թոթափելու, ինչպես նաև ճշմարտության ու սիրո հիմնահարցերից:

ПРОБЛЕМА НРАВСТВЕННОГО УСОВЕРШЕНСТВОВАНИЯ ЧЕЛОВЕКА В ТВОРЧЕСТВЕ М. НАЛБАНДЯНА

АЙВАЗЯН О. О.

Резюме

М. Налбандян заложил и развил принципы реалистической эстетики.

В армянской литературе М. Налбандян был первым, кто изобразил типажи новоявленных буржуа, ставших прототипами подобных образов, созданных Раффи, Ширванзаде, Пароняном и др. Считая принцип свободы совести наиважнейшим, он ставил во главу угла вопрос нравственного усовершенствования человека, непосредственно связывая его с улучшением социального положения людей, с демократизацией общества.

---

[13] **Фейербах Л.,** *Избранные философские произведения, т. 2, М., 1955, с. 308-309.*

[14] ԵԼՀ, հ. 2, Ե., 1980, էջ 322: